

մասամբ վերականգնել իր աչքերի առողջութիւնը և վերադարձաւ Շուշի, ուր 1902 թ. մարտ 27-ին վախճանուեցաւ եւ Վեհափառ Կաթուղիկոսի հրամանով նոյն ամսի 30-ին Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին Պազանջեցցց հկեղեցու բակում մեծ հանդիսով հողի յանձնուեցաւ Տիկ. Ալէքսանեանը լաւ ծանօթ էր Հայոց Կաթուղիկոսներին, սկսած Մասթէոսից, եւ համարեա՞ բոլորիցն էլ ունի օրհնութեան եւ գոհունակութեան կոնդակներ :

Հանգուցեալ արկ. Մարգարիտ Ալէքսանեանի ղծաղրած ատոների տեսակները համարեա՛ վերջ չունին, բացի այն որ նա ընդօրինակութիւններով է սովորել, պէտք է ասել, որ նա մի շարք գեղեցիկ ծաղկագրերի հեղինակ է: Աւետարանները գրուած են հասարակ տպագրական թանաքով եւ մարդս հազիւ թէ կարողանայ որոշել դա ձեռագիր է թէ տպագիր: Տիկինը այրիանալով, ասում են որ իր ամբողջ կեանքը անց էր կացնում գրելով պարապելով, եթէ հանգ. տիկինը կրթուէր մի որ եւ է գեղարուեստական ճեմարանում այսպիսի ընդունակութիւնից յետոյ, արգեօք ինչպիսի՞ հրաշքներ պէտք է գործէր գեղարուեստական աշխարհում . . . :

Հ. Տ. -ԱՍՏՈՒԱԾԱՏԲԵԱՆՑ



ԱԼԱԳ-ՍԱՐԿԱՒԱԳՈՒՅՆԻ ՓԵՓՈՅՆԷ ԽՈՒԲԵԱՆ

Յունուարի 17-ին ի Տէր հանգիւաւ եւ երէկ, շաբաթ, ամսոյս 24-ին գերեզման իջաւ Թիֆլիսի կուսանոցի մայրապետ Փեփոյնէ Խուբեան: Հանգուցեալ մայրապետը 90 տարեկան էր եւ մասել էր կուսանոց եօթտարին դեռ չըլրացած: Մայրապետութեան հինգ տարին այս ջրօրհնէնքին լրացաւ:

Թիֆլիսի Կուսանաց անապատը հիմնել են Բէհրութեան իշխանները: Ահա այս մենաստանի պատմութիւնը :

Տասնութերորդ դարու սկզբներում Մելիք Աշխարքէդ Բէհրութեան Պարսկաստանում Նոր-Ջուղայի կուսանոցի մասին տեղեկանալով, մտադրուում է եւ ինքը նման մի մենաստուն հիմնել Թիֆլիսում: 1727 թ. տաճիկները Թիֆլիսին տիրապետելով, պատերազմում ընկնում է հերոսաբար իշխան Բէհրութեան եւ մահւան տագնապում կտակում է իր փափազն իրագործելու:

Սրա հարազատ որդին Մէլիք Ազան Նադր-Շահի հետ ինդուեներին նւաճելուց յետոյ հօր կտակը կատարում է: Նոր-Ջուղայից հրաւիրում է

երկու կոյս եւ իր տանը տուանձին աղօթարան սահմանելով, աւելացնում է սրանց Բէհրութեան իշխանուհի Գայանէին եւ այսպիսով հիմք դնում Թիֆլիսի կուսանոցին։ Ապա Սօլոզակ լերան յանջին Երեք հարազատ եղբարց Վասիլ, Դրիդոր եւ Դաւիթ Բէհրութեաններին պատկանեալ գևանի վրայ կառուցանում ու, Սաեփանոս նախավիկայի անունով մի եկեղեցի, պարսպում, շինում խցեր, եւ երկու զուոր թողնում մէկը Բէթղէհմի եկեղեցու սանդուխքներից, միւսոր իրանց Բէհրութեանների ապարանքից։ Մենաստանը ապահովում են Բէհրութեանները զանազան կալւածքներով եւ ընծայաբերութիւններով։ Առաջին մայրապետը Նոր Զուղայից Փէկած կոյս Յուստիանէն էր, Ղղլարերցի, սրա մահից յետոց ըստ աւագութեան՝ ընտրում են մայրապետներ իշխանուհի Գայանէ Բէհրութեան, իշխանուհի Հոփիսիմէ Բէհրաբէղեան, իշխանուհի Եփեմիա Բէհրութեան (նշանաւոր հերոս Բարսեղ Բէհրութեանի քոյրը), իշխանազնուհի Կատարինէ Արզութեան-Երկայնարազուկ։

Հանգուցեալ Փեփրոնէն 6-րդ մայրապետն էր, որի յուղարկառորութիւնը եւ թաղումը կատարեց վայելուչ շուրջով։ Ուրբաթ երեկոյեան ժամը 4-ին մարմինը բերին իր խցից մենաստանի եկեղեցին եւ կատարեց հանդիսաւոր ամբիճք։ Հետեւեալ օրը, ս. պատարագին ներկայ էին Թիֆլիսի ամբողջ հայութեան ներկայացուցիչները։ Մենաստանից ախուրթափորը անցաւ Բէհրութեան փողոցով Խօջիվանքի գերեզմանասան եկեղեցին, որ նոյնիսկ Բէհրութեաններն են կառուցել, ու մարմինը ամփոփւեց եկեղեցու դաւթում։

Հստ աւագութեան, մայրապետութեան թիկնածուն է չնորհունակ կոյս Գայանէ Հախնազարեան, որը սակայն շատ ծեր լինելով (90 տարեկան) եւ հիւանդ, հաւանական ընտրելին ըստ աւագութեան է իշխանուհի Եփրոսինէ Արա-Մելիփեանց։

Միաբանութիւնն այժմս 17 հոգուց է բազկացած, որոնցից 13-ը ձեռնադրւած են սարկաւագ, իսկ 4-ը դպիր։ Միաբանութեան մէջ կան չնորհալի կոյսեր, որոնք յայտնի են իրանց գթասրառութեամբ, ասեղնադործութեամբ եւ բարեգործութիւններով։

(Տարազ)